



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԻՐ. ՅԱՐԻ 1914

Տարեկան 16 ֆր. ոսկի — 6 դր.:
վեցամսեայ՝ 8 ֆր. ոսկի — 3 դր.:
Մեկ թիւ կ'արժէ 1-50 ֆր. — 70 կ.:

ԹԻԻ 10, ՅՈԿՏԵՄԲԵՐ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ.



Բաժողիկէ աշխարհը Սեպտ. 3ին կը թօթափէր իւր վրայէն Պիոս Ժ.ի մահուան պատճառած սուգը, վասն զի Կարդինալաց ժողովը կու տար իրեն նոյն օրը ուրիշ Հայր մը յանձին Բոլոնիայի արքեպիսկոպոսին՝ Տեւլա Բիեզա Կարդինալին: Նոյն օրն հազարաւորներ Ս. Պետրոսի մէջ երկիւղած անհամբերութեամբ մը կը սպասէին Նոր Բահանայապետը տեսնելու եւ անոր օրհնութիւնը ընդունելու. հոն էր որ առաջին անգամ՝ լսեցին անոնք Բենեդիկտոս անունը, որով նա պիտի սկսէր իր՝ արտաքին իշխանութենէ՛ գորկ՝ Թագաւորութիւնը: 1758էն ի վեր Հռոմայ եպիսկոպոսաց ցանկին մէջ չենք հանդիպիր այդ անուան. զայն վերջին անգամ կրողը Ս. Եկեղեցւոյ մեծ Հովիւներէն եւ մեծազոյն իրաւագիտներէն մին՝ Բենեդիկտոս Ժ.Ի.ը է, որ 1740ին Բոլոնիայի արքեպիսկոպոսութենէն քահանայապետութեան ընտրուեցաւ. այս է պատճառն, որ այս օրուան Բոլոնիայի արքեպիսկոպոսն ալ նոյն անունն ուզեց կրել իբրեւ Գրուի Ս. Եկեղեցւոյ:

Նորընտիր Բահանայապետը ծնած է 1854ի Նոյ. 21ին ի Գենուա, ուր իւր նախնական եւ ընտանեկան ուսմանց ընթացքը յաջողութեամբ կատարելով Իրա-

ւանց վարդապետ կ'անուանուէր 1874ին: Բայց փաստարանի պաշտօնը Նորին Սրբութեան սրտին զոհացնում տալէն հեռու էր. անոր համար իսկ, քանի մը ամիս ետքը վերստին համալսարան կը յաճախէր եւ 1878ի Դեկտ. 21ին Աստուածաբանութեան վարդապետի պսակով արդէն պսակեալ քահանայ կը ծնունադրուէր: Ժամանակ մը ետքը Վատիկանի քարտուղարութեան մէջ պաշտօնի



ԲՆՆԵՂԿՆՈՍ ԺԾ.

կը կոչուէր՝ իբրեւ պաշտօնեայ ոչ-սովորական արտաքին խնդրոց՝ պաշտօն մը զոր ժամանակին վարած էր Ռամպոլլան: Իսկ երբ Ռամպոլլան իբրեւ Նուիրակ Մաղրիդ կ'առաքուէր, անոր կ'ընկերանար Տելլա Էիեզա եւ 1887ին կը վերադառնար Հոմ՝ երբ Լեոն ԺԳ. Ռամպոլլան ծիրանաւոր անուանեց. եւ հոն դարձեալ արտաքին գործոց քարտուղարութեան մէջ պաշտօնի կը դրուէր. ուր հետզհետէ անցնելով զանազան աստիճաններէն կը բարձրանայ մինչեւ պետական քար-

տողարի փոխանորդի պաշտօնին: Սոյն դերքիս մէջ մասց Նորին Սրբութիւնը մինչեւ Պիոս Ժ.ի շարքորդ տարին: 1907ի Դեկտ. 22ին Պիոս Ժ.է եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունեցաւ իբրև Արքեպիսկոպոս Բոլոնիայի: Իր եպիսկոպոսութեան եօթ տարիններուն մէջ ցոցուց զարմանալի կարողութիւններ եւ անհամատեղ եռանդ մը հոգ հոգուցի՝ որուն արդէն սիրով կը նուիրէր իր ժամերն երբ Վատիկան ծանր պաշտօններ կը վարէր: Անշափ էր իր թեմականներուն ուրախութիւնը երբ Պիոս Ժ. ղինքն տարույս Մայիս 25ին կարգինալութեան մեծ պատուոյն քարծրացուց: Կրնանք երեւակայել թէ ինչպիսի անմասն ուրախալի անակնկալ մը եղաւ Բոլոնիայի ժողովրդեան իրենց սիրելի Հովուին Յիսուսի Քրիստոսի փոխանորդի պաշտօնին վերանստույն լուրը: Վայրկենապէս Մայր եկեղեցոյն հետեւելով Բոլոնիայի քուրք եկեղեցիներն իրենց զանգակներովն քաղաքին ամէն անկիւններն հասցուցին այդ աւետիսը. այս տիրող ներքին ցնծութեան արտաքին ցոյցն էր:

Բենեդիկտոս ԺԾ. իր արտաքինովը կը յիշեցնէ Պիոս Է.ը: Սրբազան Հայրը մարմնով փոքր է, քիչ մը կորացած եւ նիհար՝ նման Լեւոն ԺԳ.ի: Սակայն իր դիմագիծին վրայ որոշ կը կարդացուի աննկուն հաստատութիւն մը եւ սուր՝ խորաթափանց եւ հեռատես միտք մը. վեհութիւն ու ճոխութիւն մը կայ Նորին Սրբութեան անծին վրայ. եւ անշուշտ կամընի եւ մտքի այս փնտռուած յատկութիւններն էին պատճառը՝ որով կրցաւ ոչ միայն Բոլոնիայի մէջ ամենուրեք՝ այլ նաեւ Վատիկանի եւ Կարդինալաց ժողովոյն մէջ մեծ համակրանք վաստակիլ:

Ինչպէս Պիոս Է. գրեթէ դար մը յառաջ՝ համեռոպական պատերազմին ժամանակ տարօրինակ պարագաներու տակ քահանայապետ ընտրուեցաւ, այսպէս ալ այժմ՝ նման եւ աւելի ահարկու արհաւիրքներու մէջ է որ անմոռանալի Պիոս Ժ.ին յաջորդը զար կը քարծրանայ եւ Պետրոսի նաւուն դեկը ձեռք վառնու, որպէս զի Քրիստոսի Ս. Եկեղեցին այս ահաւոր ալեաց եւ փոթորիկի մէջ ուղղէ եւ վարէ: Չենք ուզէր գուշակել թէ արդեօք ինչպիսի դեր վերապահուած է այս աշխարհաւեր կոտորն մէջ խաղաղութեան Իշխանին փոխանորդին: Սակայն յամենայն դէպս գործելու լայն ասպարէզ մը կայ Նորին Սրբութեան առջեւ: Պիոս իր յաջորդին ժառանգութիւն ձգած է իւր ամենայն ինչ ի Քրիստոս նորոգելու ծանր գործոյն լրացումը եւ իրեն սկսած ներքին քարակարգիչ ձեռնարկներուն կատարումը: Դժուարին գործ, ստուգի. սակայն աւելի դժուարինները կը սպասեն իրեն Եկեղեցոյ քաղաքականութեան մէջ: Եւ ո՛վ կրնայ նոյն իսկ մակաբերել թէ այս համաշխարհային հրդեհին հետեւութիւնները ուժի ինչպիսի սպառում պիտի պահանջեն Պետրոսի յաջորդէն: Ահա այսպիսի պարագաներու տակ է որ Նախահնամուտութիւնը կու տայ մեզի յանձին Բենեդիկտոսի՝ Լեւոն ԺԳ.ի աշակերտ մը, Ռամբուլլայի դպրոցին մէջ հրահանգուած ոյժ մը՝ որ սակայն միանգամայն Պիոս Ժ.ի նմանող մըն է հոգ հոգուցի իր քուռն եռանդովը: Տայր Բարձրեալը որ Բենեդիկտոս ԺԾ.ով թէ զԼեւոն ԺԳ. եւ թէ զՊիոս Ժ. ունենանք մեզի Առաջնորդ յամայր ամս:

ԽՄԲ. «ՀԱՆԴ.»